600.0379.30.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 նոյեմբերի 2016 թվականի №379Ն
ք.Երևան

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ, 552-րդ հոդվածի 2-րդ մասերը, 560-րդ հոդվածը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N43/24 արձանագրային որոշումը և նպատակ ունենալով 2017 թվականի հունվարի 1-ից ապահովել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների շարունակական մատուցումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝
   1) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-բնակիչ բաժանորդ)՝ պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն №1 հավելվածի.
   2) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման (մատակարար-ոչ բնակիչ բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն №2 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում 2017 թվականի հունվարի 1-ից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) կենտրոնացված ծառայություններ մատուցող ջրամատակարար ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2017

թվականի հունիսի 1-ը կնքել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ համաձայն սույն որոշման 1-ին կետով սահմանված օրինակելի ձևերի:

3. Ընդունել ի գիտություն, որ 2017 թվականի հունվարի 1-ից մինչև սույն որոշման 2-րդ կետի համաձայն պայմանագրերի կնքումը ընկերության կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները մատուցվում են սույն որոշման 1-ին կետով սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերի հիման վրա, եթե բաժանորդը գրավոր չի հրաժարվում նշված ծառայությունների մատուցումից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
30 նոյեմբերի 2016թ.